ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

ՏՀԱՍ ՄԻՋԱԴԵՊ ԹԲԻԼԻՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Փետրվարի 16-ին Թբիլիսիում տեղի ունեցավ տխուր ու տհաճ միջադեպ, որը լայն արձագանք, վրդովմունք եւ որոշակի տարակուսանք առաջացրեց վիրահայ համայնքում:

Այդ օրը, մայրաքաղաքի Սուրբ Էջմիածին եկեղեցու հարակից տարածքում հավաքված հավատացյալները, թբիլիսցի Գեորգի Էլիբեգովի կողմից Վիրահայոց թեմի հասցեին կատարած սադրիչ հայտարարությունների կապակցությամբ, հեռախոսով կապվեցին նրա հետ: Մարդիկ հուսով էին, որ նա կպարզաբաներ, թե ինչ աղբյուրներից է ստացել նման տեղեկատվությունը: Ի պատասխան այդ օրինական պահանջի, էլիբեգովի կողմից հնչեցին հայհոյանքներ: Իր նվիրական զգացումներում վիրավորված հավատացյալների խումբը, եկեղեցու դեմ զրպարտությունները դադարեցնելու պահանջով, Տեր Մանուկ քահանա Ջեյնալյանի հետ, շարժվեց եկեղեցուց երեք-չորս հարյուր մետր հեռավորության վրա գտնվող էլիբեգովի տան կողմը: Տան մոտ, էլիբեգովը, իրեն բնորոշ կոպիտ ձեւերով, Տեր Մանուկին հասցրեց բանավոր եւ ֆիզիկական վիրավորանքներ, որին ի պատասխան, համբերությունից դուրս եկած մարդիկ ստիպված էին պատասխանել նույն ձեւով: Փախչելով տուն, էլիբեգովը վայրկյաններ անց դուրս թռավ կացնով, որը թափահարելով փորձեց հարձակվել հավաքվածների վրա, նույնիսկ թեթեւակի վիրավորեց նրանցից մեկին: Սկիզբ առած ծեծկռտուքը կանխեցին պարեկային ոստիկանության ներկայացուցիչները, որոնք էլիբեգովի դեմ հարուցեցին քրեական գործ:

Ահա փետրվարի 16-ին տեղի ունեցածի հակիրճ նկարագիրը:

Իսկ ի՞նչն էր այն դրդապատճառը, որի հետեւանքով տեղի ունեցավ թբիլիսահայերի համար նվաստացուցիչ վերոնշյալ միջադեպը:

Ընդհանուր առմամբ, վիրահայ համայնքի կյանքի հետ մինչեւ վերջին ժամանակներս գրեթե ոչ մի առնչություն չունեցող Գեորգի էլիբեգովը, 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին հաջորդած իշխանափոխությունից հետո (գուցե եւ մինչ այդ), միացել էր «Վրացական երազանքին», թեպետ այսօր «Երազանքը» ժխտում է նրա անդամակցության փաստը:

Ավելին, իրեն ներկայացնելով Վրաստանի նախագահին, ինչպես նաեւ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների հանձնաժողովների անդամ (նախագահի աշխատակազմում պարզաբանեցին, որ նախագահին առընթեր նման խորհուրդ գոյություն չունի)՝ Գեորգի էլիբեգովը, որին մինչ այդ հայկական թատրոնի ներկայացումներին ոչ մեկը չի տեսել անգամ, առանց հաշվի առնելու «խոսքի ազատության» հիմնադրույթի շրջանակներում ձեւավորված բարոյական շրջանակները, կիսավրացերեն, կիսառուսերեն եւ, ամենակարեւորը, բացարձակապես խեղաթյուրված հայերենով «Օբյեկտիվի» հեռուստաալիքով տարվող իր «հայկական հեռուստաժամի» առաջին իսկ հաղորդումներից «խաչակրաց արշավանք» սկսեց Թբիլիսիի պետհայդրամայի թատրոնի դեմ: Գրեթե բոլոր «հեռուստաժամերի» տեսագրության վերլուծությունը հստակորեն վկայում է, որ անկախ հաղորդման թեմայից, Գ.էլիբեգովը, չգիտես ինչու, միտումնավոր խոսակցությունն ուղղում էր թատրոնի ղեկավարության վարկաբեկմանն ու հեղինակազրկմանը:

Բարեբախտաբար, նրա գործադրած ջանքերը ոչ մի արդյունքի չբերեցին, սակայն «թատերական ասպարեզում» նրա տապալումը չսթափեցրեց նրան: Գեորգի էլիբեգովի հաջորդ թիրախը դարձավ ոչ այլ ոք, այլ Վիրահայոց թեմը եւ թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Այս անգամ «արվեստագետ» էլիբեգովը վերածվեց «ֆինանսիստ» էլիբեգովի, քանզի այս անգամ հակադրության պատճառը շատ ավելի «պատկառելի» էր: Խոսքը վերաբերում էր ֆինանսներին:

Իսկ ամեն ինչ սկսվեց փետրվարի 7-ին, երբ Գեորգի էլիբեգովը ռուսական «Ռեգնիում» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Սրբազանին մեղադրեց եկեղեցուն հատկացված ֆինանսների յուրացման, հայ հավատացյալների շրջանում իբր հակավրացական տրամադրվածություններ սերմանելու մեջ եւ այլ, անկասկած, շինծու մեղքերում: Հատկանշական է այն, որ էլիբեգովն իր այդ հարցազրույցում, քննադատելով Սրբազանին, «մոռացավ» հիշատակել այն լավ ու նշանակալի գործերը, որոնք կատարվել ու կատարվում են վերջին 8 տարիների ընթացքում Սրբազանի նախաձեռնությամբ: Մասնավորապես, «մոռացավ» նշել, որ Սրբազանի անմիջական մասնակցությամբ վերանորոգվեց Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցին, Սամցխե-Ջավախեթիում վերանորոգվեցին եւ կառուցվեցին մոտ հինգ տասնյակ եկեղեցիներ, առաջնորդարանին կից բացվեց «Հայարտուն» մշակութային կենտրոնը՝ իր բազմաբնույթ եւ բազմաթիվ խմբակներով:

Առաջին մեղադրանքի կապակցությամբ, ըստ էլիբեգովի, Սրբազան հայրը, խուսափելով համայնքի առջեւ հաշվետվություն ներկայացնելուց, իբր յուրացրել է Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլու կողմից՝ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգման համար հատկացված 100 հազար լարին: Ապա նրա կողմից հետեւում է աներկիմաստ զգուշացումը՝ նկատի ունեցեք, խորհրդային ժամանակահատվածում վնասներ կրած կրոնական չորս միավորումներին (Վիրահայոց թեմին, մահմեդականներին, կաթոլիկներին եւ հրեաներին) որպես փոխհատուցում Վրաստանի կառավարության կողմից հատկացվող 4,5 միլիոն լարի գումարն էլ «Իվանիշվիլյան 100 հազար լարիանոց հանգանակության» բախտին կարժանանա:

Ճիշտ է, «Ռեգնումը» արդեն հաջորդ օրը, մեր կարծիքով, յուրովի ընդունելով վերոնշյալ հրապարակման լուսաբանման գործում իր մեղքի բաժինը, հրապարակեց Վիրահայոց թեմի առաջնորդարանի հայտարարությունը, ըստ որի՝ այդ փողերի հետ ոչ միայն առնչություն չի ունեցել, այլեւ չի տեսել այդ գումարը, որ Իվանիշվիլու հատկացրած 100 հազար լարին «Քարթու» հիմնադրամից անմիջականորեն փոխանցվել է բանկ, որն, իր հերթին, կապալառու շինարարական կազմակերպության հետ իրականացնում է Թբիլիսիի Սուրբ Գեւորգ հայկական եկեղեցու վերանորոգումը:

Սակայն էլիբեգովին վերոնշյալ պարզաբանումը չկանգնեցրեց, սադրիչ հայտարարությունների հոսքը շարունակվեց: Այս անգամ Գեորգի էլիբեգովը շատ ավելի վարկաբեկիչ ու ամոթալի հայտարարություններով հանդես եկավ «Օբյեկտիվի» հեռուստաընկերության եթերով եւ «Ասավալ Դասավալի» թերթի էջերում:

Մեր «հերոսի» պատկերը ամբողջացնելու համար, հավանաբար, տեղին է հիշեցնել եւս մի հանգամանք. վրացական պարբերականներից մեկին տված հարցազրույցում Գեորգի էլիբեգովը, անդրադառնալով Երեւանի 2008 թվականի մարտի մեկի իրադարձություններին, հայտարարեց, որ իբր ցույցը առանձնակի դաժանությամբ ցրել են ոչ ավել, ոչ պակաս, «Վրաստանից կանչված հատուկ ջոկատայիններ»: Թող ընթերցողը դատի, թե ի՞նչ քողարկված նպատակ էր հետապնդում նման սադրիչ հայտարարության հեղինակը:

Ցավոք, ԶԼՄ-ների եւ հեռուստաալիքների միջոցով վերոնշյալ սադրիչ, ստահոդ հայտարարությունները բավականին երկար ժամանակ ոչ մի արձագանք չառաջացրին: Հենց այդ լռությունն էլ, ըստ երեւույթին, Գեորգի էլիբեգովի մեջ է'լ ավելի ամրացրեց անպատժելիության զգացումը, որն իր անմիջական արտահայտությունը գտավ փետրվարի 16-ին ծավալված իրադարձություններում:

Օրինաչափ հարց է ծագում. ինչպե՞ս հասանք այս օրվան: Ո՞վ է մեղավոր տեղի ունեցածի համար՝ միայն էլիբեգո՞վը, թե՞ մենք բոլորս ունենք մեր մեղքի բաժինը: Ինչո՞ւ ոչ ոք չուզեց ժամանակին հրապարակավ հայտարարել, որ էլիբեգովի ասած ամեն մի խոսքը զրպարտություն է: Ինչո՞ւ էինք լռում, թե՞ այս անգամ էլ գործեց «աղբը տանից դուրս չբերելու» չարաբաստիկ սկզբունքը, առանց մտածելու, որ միշտ կգտնվեն այնպիսիները, ովքեր մեր յուրաքանչյուր բացթողումը, յուրաքանչյուր զիջումը կօգտագործեն իրենց նենգ նպատակներին հասնելու համար: Տվյալ պարագայում ակնհայտ է՝ Գեորգի էլիբեգովը կամ նրա ետեւում կանգնած ուժերը կամա թե ակամա, գիտակցաբար կամ առանց հասկանալու հետապնդում են վիրահայ համայնքի վարկաբեկման նպատակ: Դա ձեզ չի հաջողվի, պարոնայք...

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹ

«ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՎԱՆԴԻ ՀԱՄԱՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարությունը, Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը «Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» 2014թ. մրցանակաբաշխության շրջանակներում հայտարարում են մրցույթների պայմանները հետեւյալ անվանակարգերում՝

1. «Մայրենիի պաշտպան»,

2. «Լավագույն ամենօրյա կրթօջախ»,

3. «Լավագույն լրատվամիջոց»,

4.«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» *խորագրով Ցեղասպանության 100-այա տարելիցին նվիրված շարադրությունների մրցույթը:*

Բոլոր անվանակարգերում սահմանված են 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի եւ խրախուսական մրցանակներ:

«Հայապահպանության գործում նշանակալի ավանդի համար» մրցանակաբաշխության նպատակն է խրախուսել սփյուռքում հայ ազգային ինքնության պահպանման ու զարգացման հարցում կազմակերպությունների, տարբեր խմբերի, առանձին անհատների ունեցած ներդրումը, հավուր պատշաճի գնահատել եւ արժեւորել այս ուղղությամբ հայկական համայնքների գործունեությունը:

1. «Մայրենիի պաշտպան» մրցույթի կազմակերպման նպատակն է խրախուսել սփյուռքյան կառույցներին եւ անհատներին, ովքեր մեծ ներդրում ունեն մայրենիի պահպանման, տարածման, հայեցի լեզվամտածողության ձեւավորման, հայեցի կրթության եւ դաստիարակության, սփյուռքի գրական-գեղարվեստական կյանքի զարգացման բնագավառում:

«Մայրենիի պաշտպան» մրցույթին կարող են մասնակցել սփյուռքում գործող համայնքային կազմակերպություններ, կրթօջախներ, մշակութային հաստատություններ, մայրենի լեզվի ուսուցիչներ, լեզվաբաններ, մշակույթի, գրական գործիչներ, գործարարներ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացված հայտադիմումները պետք է ներկայացնեն ՀՀ սփյուռքի նախարարություն մինչեւ ս. թ. սեպտեմբերի 30-ը:

Հայտադիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել նաեւ՝

- լուսանկար,
- կրթության մասին փաստաթուղթ (պատճենը),
- համայնքի, կառույցի կամ դպրոցի բնութագիր-երաշխավորագիր,
- որպես «Մայրենիի պաշտպանի» իր գործունեության նկարագիրը:

2. «Լավագույն ամենօրյա կրթօջախ» մրցույթին կարող են մասնակցել սփյուռքում գործող հայկական ամենօրյա կրթօջախները՝ ***համակրթական դպրոցներ, ամենօրյա վարժարաններ, քոլեջներ,*** որոնք բավարարում են հետեւյալ չափանիշներին՝

* գրանցված են որպես կրթօջախ եւ գործում են որպես կրթական հաստատություն տեղի կրթական համակարգում, հայկական կազմակերպությանը կամ եկեղեցական կառույցին կից,

* ուսումնական ծրագրում ներառված են եւ կրթօջախում դասավանդվում են առնվազն հետեւյալ հայագիտական առարկաները՝ հայոց լեզու (արեւմտահայերեն եւ/կամ արեւելահայերեն), գրականություն, հայոց պատմություն, եւ/կամ հայ եկեղեցու եւ մշակույթի պատմություն, հայրենագիտական այլ առարկաներ:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացված հայտադիմումները պետք է ներկայացնեն ՀՀ սփյուռքի նախարարություն մինչեւ ս. թ. սեպտեմբերի 30-ը:

3. «Լավագույն լրատվամիջոց» մրցույթին կարող են մասնակցել վերջին երեք տարվա ընթացքում (2011-2013թթ.) եւ մինչեւ օրս սփյուռքում գործող լրատվամիջոցները, որոնք իրենց ուշադրության կենտրոնում են պահում հայապահպանության, Հայաստան-Սփյուռք գործակցության, սփյուռքում հայկական մշակույթի եւ կրթության, ինչպես նաեւ ազգային այլ հարցեր՝ հրապարակելով նշված թեմաներով հոդվածներ, հարցազրույցներ, ակնարկներ կամ սփռելով հաղորդումներ, հաղորդաշարեր եւ այլ նյութեր: Մրցույթին ներկայացվում են 2013 թվականին հրապարակված նյութերը:

Մրցույթը կանցկացվի հետեւյալ անվանակարգերում՝

* տպագիր լրատվամիջոց (թերթ, հանդես)
* հեռուստաալիք/հեռուստաժամ
* ռադիոալիք/ռադիոժամ
* համացանցային լրատվամիջոց
* բլոգ

Յուրաքանչյուր անվանակարգում սահմանված են գլխավոր եւ խրախուսական մրցանակներ:

1. Մասնակցության հայտ,
2. 2013թ. գործունեության ամփոփագիր:

Յուրաքանչյուր լրատվամիջոց մրցույթին կարող է մասնակցել միայն մեկ անվանակարգում:

Նախորդ՝ 2013թ. մրցույթի գլխավոր մրցանակակիրները հրավիրված են մասնակցելու մրցութային հանձնաժողովի աշխատանքներին եւ մրցույթին չեն մասնակցում:

Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացված հայտադիմումները պետք է ներկայացնեն ՀՀ սփյուռքի նախարարություն մինչեւ ս. թ. սեպտեմբերի 30-ը:

4.«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված ***«Հիշենք անցյալն՝ ապագան կառուցելու համար»*** թեմայով Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի կրթօջախների բարձր դասարանների աշակերտների եւ ուսանողների համար անցկացվող լավագույն գրական ստեղծագործության միջազգային 10-րդ մրցույթ:

Մրցույթի հիմնական նպատակն է Հայաստանի, Արցախի եւ սփյուռքի աշակերտներին եւ ուսանողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի պատմական անցյալին եւ սերմանել հավատ նրա ապագայի նկատմամբ:

Մրցույթն անցկացվում է Ռուսաստանի հայերի միության, Համաշխարհային հայկական կոնգրեսի, ՀՀ սփյուռքի նախարարության կողմից եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աջակցությամբ:

Մրցույթի կանոնակարգը կհրապարակվի լրացուցիչ 2014թ. օգոստոսին:

Վերը թվարկած մրցույթներին մասնակցության հայտերի ընդունումը կսկսվի մրցանակաբաշխության հայտարարման օրվանից եւ կշարունակվի մինչեւ յուրաքանչյուր անվանակարգի հայտադիմումների ընդունման վերջնաժամկետը: Փոստով առաքված հայտերն ընդունելիս որպես հիմք կընդունվի առաքման օրվա վերաբերյալ փոստային նշումը:

Հայտերի նախնական գնահատումից հետո մրցութային հանձնաժողովը կարող է դիմել հայտատուին՝ վերջինիս գործունեությունը լուսաբանող լրացուցիչ տպագիր նյութեր, գրքեր, հրատարակություններ, բրոշյուրներ, տեսաերիզներ, լուսանկարներ եւ այլ լրացուցիչ նյութեր տրամադրելու խնդրանքով:

Մրցույթների արդյունքները կամփոփվեն ս.թ. տարեվերջին:

Յուրաքանչյուր անվանակարգի համար գործում են մասնագիտական մրցութային հանձնաժողովներ:

Բոլոր անվանակարգերում մրցանակակիրներից կպահանջվեն նաեւ բանկային տվյալներ (անվանում, հասցե, SWIFT, հաշվեհամար), ինչպես նաեւ անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն:

Մրցույթներին մասնակցել ցանկացողները մասնակցության հայտերը լրացնում եւ ներկայացնում են հետեւյալ հասցեով՝ ՀՀ, ք.Երեւան, Վազգեն Սարգսյան 26/1 կամ էլ. հասցեներով՝ allarmenian@mindiaspora.am; info@mindiaspora.am, press@mindiaspora.am; gitakrtakan.diaspora@yandex.ru; gitakrtakan-diaspora@mail.ru; mshakuyt.diaspora@mail.ru; mindiaspora@yahoo.com; contact@mindiaspora.am, գրական ստեղծագործությունների մրցույթի համար նաեւ՝ arm_wac@armcongress.am:

Մրցանակաբաշխության իրականացման պատասխանատու՝ ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ՝ Սիրվարդ Համբարյան (Հեռ.՝ +37410 58 56 01 (117)):

«Լավագույն լրատվամիջոց» մրցույթի դիմորդներն իրենց հուզող հարցերի պատասխանները կարող են ստանալ դիմելով ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի տեղեկատվության եւ հեռահաղորդակցության (+37410 58-56-01 (109) Նալբանդյան Նվեր) կամ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչություն (+37410 58-56-01 (108) Բաղդասարյան Էվելինա):

«Հայապահպանության գործում նշանակելի ավանդի համար» համահայկական ամենամյա մրցանակաբաշխության 2014թ. տեղեկատվական փաթեթը հետագայում՝ մրցութային հանձնաժողովների աշխատանքների, մրցույթների արդյունքների մասին տեղեկատվությունը կտեղադրվեն ՀՀ սփյուռքի նախարարության կայքէջում՝ www.mindiaspora.am, ինչպես նաեւ՝ նախարարության «Հայերն այսօր» էլեկտրոնային թերթի պաշտոնական կայքում՝ www.hayernaysor.am:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ՍԼՈՒՆԴ ՈՒՂԵՂԻ ՀԱՄԱՐ

Երբեմն հոգնածություն եմ զգում, սակայն ոչ ֆիզիկական: Այնպիսի տպավորություն է, որ կարծես զրկվում եմ մտածելու ունակությունից: Չգիտեմ՝ ի՞նչ է կատարվում: Գույե, օգնեք:

Տ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ախալքալաքի

Նման երեւույթներ միայն ձեզ հետ չէ, որ տեղի են ունենում: Դա ուղղակի պայմանավորված է C վիտամինի պակասով:

C վիտամինը պետք է ընդգրկված լինի ամենօրյա սննդի մեջ: Դրա պարտադիր քանակը կարելի է ապահովել 1 բաժակ թարմ քամած նարնջի հյութով կամ 2 կիվիով: Այս վիտամինի պակասը կլրացնեն սեւ հաղարջից, մասուրից, լոռամրգից պատրաստված սովորական ըմպելիքները, ինչպես նաեւ կիտրոնով թեյը: Եթե ցանկանում եք բարելավել ուղեղի աշխատանքը, չպետք է մոռանաք սպիտակուցների մասին՝ միս, կաթնամթերք, հատկապես՝ կաթնաշոռ: «Ուղեղի կերակրացանկը» լավ կանեք համալրել միկրոտարրերով: Դրա համար օգտագործեք սամիթ, մաղադանոս, ռեհան եւ այլ կանաչեղեն:

Շաբաթվա մեջ նվազագույնը 2 անգամ պետք է ձուկ եւ ծովամթերք, ընկույզ ուտել:

Կենտրոնանալու հարցում օգնում են խնձորը եւ խաղողը:

Աշխատունակությունը բարձրացնում է կարտոֆիլը, հատկապես՝ խորոված:

Մտավոր աշխատանքով զբաղվողներին մանգան է պետք, որը մեծ քանակով պարունակվում է լոլիկի մեջ:

Տրամադրությունը բարձրացնում է B6 վիտամինը, որն «ուրախության հորմոն»՝ սերոտոնին է պարունակում: Այն կարելի է գտնել արքայախնձորի մեջ:

Ուղեղի աշխատանքը բարելավում եւ ծերացման գործընթացը դանդաղեցնում են գազարը, կարմիր տաքդեղը, նարինջը:

ÐÆØÜ²ÊÜ¸Æð

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑՆԵԼ ՊԵՊԵՆՆԵՐԸ

Գարնան գալուստը ինձ համար լրացուցիչ հոգսերի պատճառ է դառնում: Խոսքը վերաբերում է պեպեններին: Դրանք շատ են ինձ անհանգստացնում, նույնիսկ ամաչում եմ հայելու մեջ նայել: Ինչպե՞ս վարվել:

Կ.Մ.

Թբիլիսի

Պեպենների առկայության դեպքում անհրաժեշտ է հատուկ խնամք՝ սկսած մարտ ամսից մինչեւ սեպտեմբեր:

Կանայք եւ աղջիկները միշտ տարբեր միջոցների են դիմում պեպեններից ազատվելու կամ էլ գոնե դրանք պակաս արտահայտիչ դարձնելու համար:

Պեպենների առկայության դեպքում պրոֆիլակտիկ խնամքը սկսվում է դեմքի եւ վզի մաքրումից: Յուղոտ, չոր եւ նորմալ մաշկի համար միշտ անհրաժեշտ է կատարել թթված կաթով կամ մածունով լվացումներ: Դեմքի մաքրումից հետո, դեմքի այն հատվածներում, որտեղ առկա են պեպենները, կարելի է պատրաստել մածունի եւ կաթնաշոռի խառնուրդից դիմակ եւ պահել 10-15 րոպե: Յուղոտ մաշկի դեպքում մինչեւ այս գործողությունը հարկավոր է մաշկին քսել կիտրոնի հյութ: Դիմակը հանել թաց բամբակի օգնությամբ: Դրանից հետո թաց մաշկին քսել սնուցող որեւէ կրեմ: Այս դիմակը կարելի է օգտագործել ամեն օր՝ 15-20 օրվա ընթացքում:

Յուղոտ եւ նորմալ մաշկի վրա պեպենների առկայության դեպքում շատ արդյունավետ սպիտակեցնող միջոց է հանդիսանում 2 տոկոսանոց սալիցիլային սպիրտը: Այն կարելի է օգտագործել ամեն օր՝ 1-15 օրվա ընթացքում, սակայն մինչ այդ հարկավոր է ստուգել մաշկի զգայունությունը:

Պեպենների դեմ կարելի է պայքարել նաեւ բանջարեղենից, մրգերից պատրաստված դիմակների օգնությամբ, որոնք սպիտակեցնում ու ամրացնում են մաշկը: Բանջարեղենի մեջ առաջին տեղում է վարունգը, որի հյութը կարող է փոխարինել ցանկացած լոսյոնի: Պեպենների եւ պիգմենտների առկայության դեպքում արդյունավետ գործում է վարունգի դիմակը՝ բոռաթթվի հետ: Կարելի է կրկնել օրը մեկ անգամ:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈԼԵՍՏԵՐԻՆԻ ՄԱԿԱՐԴԱԿՆ ԻՋԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պակասեցրեք սննդաբաժնում ձվի քանակը՝ հասցնելով շաբաթական 3-4 հատի: Կերակուրներ պատրաստելիս փորձեք, որ բաղադրության մեջ 3-4 սպիտակուց լինի եւ միայն մեկ դեղնուց, ձվի սպիտակուցը կարող եք ուտել անսահմանափակ քանակությամբ:

Ամենօրյա սննդի մեջ ներառեք գազար, սոխ, բրոկոլի: Ամեն օր կերեք մի փոքր պճեղ սխտոր:

Ամեն օր գործածեք մինչեւ 1 լիտր անյուղ կաթ:

Պարբերաբար սննդի մեջ օգտագործեք վարսակ, գարի, բրնձի թեփ, ծովային ջրիմուռներ, եւ մեկ ամսից արյան մեջ խոլեստերինի մակարդակը կիջնի 20-40 տոկոսով:

Ամեն օր ընդունեք 1գ C վիտամին, որի պարբերաբար ընդունումը խոլեստերինի մակարդակն իջեցնում 8-10 տոկոսով:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ողբերգական սխալը

«Բեղմնավորված ձվաբջիջը մարդ է»,- վերջապես հայտարարեցին գիտնականները եւ... նրանք, ովքեր պահանջում էին հղիության արհեստական ընդհատման իրավունք տալ կանանց, այժմ պայքարում են այդ իրավունքի դեմ: Ավելին, աշխարհի տարբեր անկյուններում գիտությունը միացել է եկեղեցուն:

Հունաստանի Ուղղափառ եկեղեցու միտրոպոլիտ Մելետին իր հանրահայտ քարոզում, որը համարում են աբորտի դեմ պայքարի յուրօրինակ մանիֆեստ, հիմնվում է ոչ թե եկեղեցական հին դոգմաների վրա, այլ՝ ժամանակակից գիտական հետազոտությունների:

Այսօր ե'ւ եկեղեցին, ե'ւ գիտությունը աբորտը համարում են ողբերգական սխալ, որն ինչ-որ ժամանակ թույլ է տվել մարդկությունը:

Վերջնահաշիվը նույնն է

Անտիկ աշխարհի դաժան օրենքները մարդուն թույլ էին տալիս սպանել երեխային ու... անպատիժ մնալ:

Ժամանակակից աշխարհի «մարդասիրական օրենքները» ըստ էության արդարացնում են այդ նույն բանը...

Ինչպե՞ս ու ի՞նչ անել

Այս ամենը, ի վերջո, չի նշանակում, թե պետք է արգելել աբորտները: Ո՛չ, նման կոչ չենք անում, քանի որ արգելքներն անիմաստ են... Նման պարագայում աբորտները, պարզապես, կանցնեն ընդհատակ: Ուրեմն, ո՞րն է մեր նպատակը: Այն, որ բոլորս էլ խորհենք մի պահ.

Մարդկային սաղմի սպանությունն ամենեւին էլ դատարկ բան չէ: Այն հետզհետե դառնում է շատ սովորական, կենցաղային երեւույթ:

Գինեկոլոգիական կլինիկաներում զարմանալ կարելի է, թե երիտասարդ աղջիկներն ու կանայք ինչպիսի՞ անհոգությամբ ու թեթեւ խղճով են անում այն, ինչին նրանց մայրերն ու տատիկները դիմել են ամոթից կարմրատակած այտերով: Նրանք թաքցրել են իրենց մեղքն ու տանջվել: Իսկ ժամանակակից սերնդի համար նման քայլը «դատարկ բան է»:

Ինչպե՞ս ու ի՞նչ անել, որ երիտասարդները խորհեն մի պահ ու հասկանան, որ «այնտեղ» մարդ է մեռնում: Մարդ, որը ճչում է ցավից: Ու ինչպե՞ս անել, ինչպե՞ս, որ այդ ճիչը լսելի դառնա բոլորին:

Սպանված սաղմը սովորական բջջային զանգված չէ...

Ինչի՞ համար է այս ամենը,- կզարմանան շատերը: Ի վերջո ցանկացած մայր էլ, որը դիմում է նման քայլի, տառապում է:

Չենք կասկածում: Յուրաքանչյուր նորմալ կին էլ խորհում է մի պահ.

- Ո՞ւմ նման կլիներ իմ չծնված որդին կամ դուստրը: Ինչպե՞ս կքայլեր, ինչպե՞ս կխոսեր:

Եթե անգամ որեւէ կնոջ ուղեղում չեն էլ ծագում նման մտքեր, միեւնույն է՝ նրա հոգում մնում է մեղքի զգացումն ու չլցվող դատարկությունը, քանի որ... Սպանված փոքրիկը սովորական բջջային զանգված չէ, նա բացարձակ մարդկային էություն է եւ ունի այն ամենը, այն նույն հոգին, կյանքը, ինչը եւ նորածին մանուկը, երեխան, դեռահասը, մարդն ընդհանրապես...

Մատնաչափիկը

Նյույորքցի բժիշկ Պաուլ Ռոքվելը այսպես է նկարագրում 8 շաբաթական էՈՒԹՅԱՆԸ, որին մենք սաղմ ենք անվանում ու սպանում անհոգությամբ:

- Սաղմը երկու ամսական էր: Վերցրի ընկերքը: Թաղանթի հեղուկի մեջ արագությամբ լողում էր արական սեռի միկրոսկոպային էությունը՝ 1,5 մատնաչափ: Փոքրիկն ամբողջովին կազմավորված էր: Մաշկը համարյա թափանցիկ էր, իսկ երկար մատիկների ծայրերին նշմարվում էին երակներն ու արյունատար անոթները: Փոքրիկը զարմանալիորեն շարժունակ էր, լողում էր վայրկյանում մեկ շրջան արագությամբ, ասես իսկական լողորդ:

Հետո... կատարվեց ողբերգությունը, պայթեց թաղանթը... մանրադիտակային մարդը զրկվեց կյանքից եւ ստացավ չծալվող վերջույթներով ծանոթ տեսքը...

ԵՐԵԽԱՆ ՍԿՍՈՒՄ Է ԲԱՌԵՐԸ ՃԱՆԱՉԵԼ ԴԵՌԵՎՍ ՄՈՐ ԱՐԳԱՆԴՈՒՄ

Նման եզրակացության են եկել ֆինլանդացի եւ նորվեգացի գիտնականները: Այսպես, ծնվելուց մի քանի շաբաթ առաջ երեխաները կարող են որոշակի բառեր հիշել:

Նրանք կարողացել են դա ապացուցել նորածինների գլխուղեղի էլեկտրական ակտիվության վերլուծության միջոցով: Այսպիսով, դեռեւս ծնված չլինելով երեխաները սկսում են մտապահել բառեր կամ հնչյունախմբեր արդեն երրորդ եռամսյակից, փոխանցում է «Ութերթրդ ալիքը»:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Ժամանակը մի անգամ է գալիս-անցնում, եւ նա, ով ընթացակից չէ նորան, հետ է մնում:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829-1866)
Հայ գրող, փիլիսոփա

Սիրում է նա ճոխ լեզուն շողոքորթ, թեթեւ սիրախաղ, իսկ սիրո համար միշտ համր է ու խուլ սիրտը նրա պարզ:

ՆԻԿՈԼՈՉ ԲԱՐԱԹԱՇՎԻԼԻ
(1807-1845)
Վրաց բանաստեղծ

Շողոքորթը ձեռնասուն կենդանիներից ամենավտանգավորն է:

ԴԻՈԳԵՆԵՍԻ ՄՏՔԵՐԻՑ
(մ.թ.ա.412-մ.թ.ա.323)
Հույն փիլիսոփա

Երբեք մի գնա այն բժշկի մոտ, ում սենյակի բույսերը չորանում են:

ԷՐՄԱ ԲՈՄԲԵԿ
(1927-1996)
Ամերիկացի գրող

Երբեք բարեկամություն մի արա այն մարդու հետ, որին դու չես կարող հարգել:



ՉԱՐԼԶ ԴԱՐՎԻՆ
(1809-1882)
Անգլիացի բնագետ

Երբ նոր էր սկսել խմելը, ծովը ծնկներին էր հասնում: Իսկ երբ շատ մարզվեց, խեղդվեց փողոցի ցեխաջրում:

Մ.ԱՆՏՈՆՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

** Բժիշկը՝ հիվանդին.*

- Ինչպե՞ս է ձեր ախորժակը:

- Մերթ բացվում է, մերթ՝ փակվում:

- Ե՞րբ է փակվում:

- Կուշտ ուտելուց հետո:

** Գոլֆ խաղացող երկու անգլիացիների մոտով թաղման թափոր է անցնում: Մեկը դադարեցնում է խաղն ու հարգալից հանում կեպին: Խաղընկերն ասում է.*

- Ներեցեք, սըր, բայց ես չէի կարծում, որ այս կնոջ թաղումը կարող էր շեղել ձեզ պես կրքոտ խաղասերի ուշադրությունը:

- Ինձ ճիշտ հասկացեք, սըր, այնուամենայնիվ մենք նրա հետ 40 տարի միասին ենք ապրել:

** Զրուցում են երկու ընկերուհի.*

- Երեկ գնացի բժշկի: Պարզվեց՝ հղի եմ:

- Երեխայի համար անուն արդեն մտածե՞լ ես:

- Ոչ, դեռ հայրանունը պիտի որոշեմ:

** - Գիտե՞ս, փորձեցի ապրել առանց սեքսի ու ալկոհոլի:*

- Եվ ինչպե՞ս էր արդյունքը:

- Դա կյանքիս ամենասարսափելի 15 րոպեն էր:

** - Սիրելիս, ի՞նչ փոքր է աշխարհը: Երեկ իմացա, որ քո երրորդ կինն ու իմ երկրորդ ամուսինը մեղրամիս են անցկացնում քո երկրորդ կնոջ առաջին ամուսնու վիլլայում:*

** Դատապաշտպանը.*

- Պարոն դատավոր: Ախր, ի՞նչ իմանար այս խեղճ կինը, որ ամուսինն այդքան զգայուն է մկնդեղի նկատմամբ:

** Ոսկեղենի խանութում.*

- Ի՞նչ արժե այս մանյակը:

- Հարյուր հազար:

- Օ՜, սարսա՜փ: Իսկ այն մատանին:

- Կրկնակի սարսափ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՐԻՏԱՆԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Փետրվարի 20-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Միջխորհրդարանական միությունում բրիտանական խմբի պատվիրակությանը՝ խմբի ղեկավար Ջոն Ուիթինգդեյլի գլխավորությամբ:

Հանդիպմանը քննարկվել են հայ-բրիտանական հարաբերությունների հետագա զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, Հայաստան-Եվրոպական միություն համագործակցությունը: Այդ համատեքստում կարեւորվել է միջխորհրդարանական համագործակցությունը՝ որպես երկկողմ կապերը խթանելու արդյունավետ միջոց, եւ անդրադարձ է կատարվել խորհրդարանական բարեկամության խմբերի գործունեությանը:

Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի պատգամավորների հետ հանդիպում ունեցավ նաեւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը: Նա հյուրերին ներկայացրել է Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, տարածաշրջանային եւ միջազգային խնդիրների լուծման վերաբերյալ Հայաստանի մոտեցումները, ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը:

ՔՆՆԱՐԿՎԵԾ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Եվրոպական կառույցների հետ Հայաստանի պետական մարմինների համագործակցությունը համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստ: Միջգերատեսչական հանձնաժողովի հերթական՝ 17-րդ նիստում քննարկվեց եւ հավանության արժանացավ Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2014-2015թթ. միջոցառումների նոր ցանկի նախագիծը:

Արթուր Բաղդասարյանի խոսքով՝ այս տարվանից սկսած արդեն Հայաստանի քաղաքացիները կունենան դյուրացված վիզային ռեժիմ, կարող են առանց արգելքների մեկնել Եվրամիության անդամ երկրներ, գործարարները կարող են շուրջ 6000 արտադրատեսակներ արտահանել Եվրոպական միություն զրոյացված մաքսատուրքերով, կամ խիստ զեղջված սակագներով:

ԱԱԽ քարտուղարը տեղեկացրել է նաեւ, որ ձեւավորված օրակարգի շրջանակներում փոփոխություններ տեղի կունենան դատաիրավական համակարգում, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, կարդիականացվի ՀՀ քաղաքական համակարգը:

ՀՀ-ԵՄ գործողությունների նոր ծրագիրը Անվտանգության խորհրդի հաստատմանը կներկայացվի առաջիկայում: Հանձնաժողովը քննարկել է կազմակերպական այլ հարցեր եւս:

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐԱՔԻ ՄԻՋԵՎ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Իրաք կատարած պաշտոնական այցի շրջանակներում հանդիպումներ ունեցավ Իրաքի արտգործնախարար Հոշիար Զեբարի, Իրաքի վարչապետ Նուրի Ալ-Մալիքի, Իրաքի փոխնախագահ Խուդեյր Ալ-Խուզայիի հետ:

Իրաքի վարչապետն ու Հայաստանի արտգործնախարարը հանգամանալից քննարկել են երկների միջեւ իրավապայմանագրային դաշտի ընդլայնման, առեւրատնտեսական, կրթական, առողջապահության, գյուղատնտեսության եւ մի շարք այլ ոլորտներում փոխգործակցության խթանման, Հայաստանի եւ Իրաքի միջեւ ուղիղ օդային հաղորդակցության հաստատման նպատակով ձեռնարկվելիք քայլերը, կարեւորվել է միջկառավարական հանձնաժողովի արդյունավետ աշխատանքը: Նույն օրը կայացել է Հայաստանի արտգործնախարարի հանդիպումը: Հանդիպանն անդրադարձ է կատարվել քաղաքական, առեւտրատնտեսական, կրթական, մշակութային, առողջապահության բնագավառներում երկկողմ համագործակցությանը: Իրաքի փոխնախագահը ներկայացրել է երկրում կայունության եւ անվտանգության ամրապնդմանն ուղղված իշխանությունների ջանքերը:

255 ՀԱԶԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲՐԵՆԴԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի կառավարությունում վարչապետ Տիգրան Սարգսյանի ներկայությամբ Հայաստանի էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության միջեւ ստորագրվել է Ազգային բրենդի մշակման աշխատանքների իրականացմանն ուղղված նվիրաբերության հուշագիր եւ Ազգային բրենդի ստեղծման վերաբերյալ պայմանագիր:

Համաձայնագրի շրջանակում կողմերը կհամագործակցեն Հայաստանի բրենդավորման ռազմավարության մշակման ուղղությամբ: Հաշվի առնելով բրենդավորման կարեւորությունը ՀՀ զբոսաշրջային եւ ներդրումային գրավչության բարձրացման, տնտեսության զարգացման, ինչպես նաեւ երկրի միջազգային հեղինակության բարձրացման գործում՝ GK Brand ընկերությունը կներկայացնի երկրի բրենդավորման մրցունակ ռազմավարություն, ներառյալ եռամյա կտրվածքով բրենդի հաղորդակցման մանրամասն ռազմավարություն եւ ծրագիր:

GK Brand-ը մարքեթինգի ոլորտում մեծ հմբավ վայելող ընկերություն է, որն աշխատել է աշխարհի 50 երկրներում, իրականացնում է Ազգային բրենդի զարգացման բազմաթիվ ծրագրեր:

ՎԻՐՏՈՒԱԼ ՀԵՌՈՒՍՏԱԴՊՐՈՑ՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը փետրվարի 18-ին ընդունել է Հայ բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչական ժողովի անդամ Վազգեն Յակուբյանին եւ ՀԲԸՄ հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում քննարկվել է մայրենի լեզվի ուսուցման նպատակով ՀԲԸՄ-ի հետ Սփյուռքի նախարարության կողմից վիրտուալ հեռուստադպրոցի ստեղծման հարցը: Նախատեսվում է մայրենին հեռահար ուսուցմամբ հասանելի դարձնել սփյուռքի տարբեր համայնքներին: Հայոց լեզուն դասավանդվելու է օտար լեզվի հիմքով: Ծրագիրը նախատեսված է լեզվի իմացության տարբեր մակարդակների համար՝ հաշվի առնելով առանձին երկրներում լեզվի ուսուցման պահանջարկը եւ նախատեսված է 10 տարեկան եւ ավելի մեծ տարիքի երեխաների համար: Դասընթացն իրականացվելու է ինտերակտիվ մեթոդով, ուսուցողական վարժությունների միջոցով: Այն հեռուստադպրոցի աշակերտների հարցերին օն-լայն պատասխանելու, շփման, կարծիքները փոխանակելու եւ քննարկելու հնարավորություն է ընձեռում: Ավելի ուշ նախատեսվում է նաեւ կազմակերպել արեւմտահայերենի ուսուցում:

ՀԲԸՄ ներկայացուցիչների հետ քննարկվել են նաեւ ծրագրի իրականացման տեխնիկական, կազմակերպական այլ հարցեր:

ԳՐԱՆՑՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԱՃ

Հայ ընթերցողները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ժամանակակից գրականության նկատմամբ: Այս մասին լրագրողների հետ զրույցում նշեց «Անտարես» հրատարակչության գլխավոր խմբագիր Արքմենիկ Նիկողոսյանը: Նա ընդգծեց, որ տարեկան միջին հաշվով վաճառվում է ժամանակակից գրողների յուրաքանչյուր գրքի 100 օրինակ:

«Անտարես»-ի գլխավոր խմբագիրն ընդգծեց, որ եթե նախկինում գրքերը տպագրվում էին հովանավորների կամ էլ պետպատվերի միջոցով եւ այդպես էլ չէին գրավում ուշադրություն, ապա այսօր գրողները համագործակցում են հրատարակիչների հետ: «Անտարես»-ի գլխավոր խմբագիրը համոզված է, որ գրքերի պահանջարկի արդյունքում ձեւավորվել է թարգմանական շարժ, եւ թարգմանիչներն այսօր լրացնում են մինչ այդ եղած թարգմանական բացերը:

«Անտարես»-ը, հաշվի առնելով ընթերցողների պահանջարկը, նախատեսում է հրատարակել եւ հանրության դատին հայերենով ներկայացնել Օրհան Փամուկի «Իմ անունը Կարմիր է» եւ Ումբերտո Էկոյի «Վարդի անունը» վեպերը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԵԼ Է

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2014 թվականի հունվարին 1,8 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը ներկայացրել է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները: Շինարարության, էլեկտրաէներգիայի արտադրության, արտաքին առեւտրաշրջանառության, արդյունաբերական արտադրության բնագավառներում անկում է արձանագրվել: 2013թ. հունվարի համեմատ այս տարի ծառայությունների ծավալն աճել է 2,7 տոկոսով, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 1,7 տոկոսով: Առեւտրի շրջանառությունն աճել է 4,6 տոկոսով: Արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 3,3 տոկոսով զիջել է 2013թ. հունվարի ցուցանիշը: Շինարարությունը շարունակում է անկում ապրել, եւ նախորդ տարվա համեմատ կատարված շինաշխատանքների ծավալը կրճատվել է 0,4 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրությունը նվազել է 0,3 տոկոսով (807 մլն կվտ.ժ), միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 10,5 տոկոսով:

ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երկրապահ կամավորականների միության՝ փետրվարի 15-ին գումարված հոբելյանական 10-րդ համագումարում վարչության նախագահ միաձայն վերընտրվեց Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանը: ԵԿՄ պատվիրակներն ընտրեցին նաեւ վարչության չորս փոխնախագահներ, վարչության կազմ, վերստուգիչ հանձնաժողովի անդամներ: Երկրապահները կողմ քվեարկեցին նաեւ ԵԿՄ կանոնադրական փոփոխություններին:

1993 թվականի հուլիսի 23-25-ը տեղի է ունեցել երկրապահ զինապարտների առաջին՝ հիմնադիր, համագումարը, որի նիստում քննարկվել եւ հաստատվել է ԵԿՄ կանոնադրությունը: Այն ամփոփում էր միության նպատակներն ու խնդիրները: 1999թ. գումարված միության 4-րդ համագումարի որոշմամբ Սպարապետ Վազգեն Սարգսյանը հայտարարվել է ԵԿՄ հավերժ նախագահ: Նույն համագումարում ԵԿՄ վարչության նախագահ է ընտրվել, այնուհետեւ 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ եւ 9-րդ համագումարներում վերընտրվել Մանվել Գրիգորյանը:

ՆԱՎԹԱՄԹԵՐՔԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանի ոչ հում նավթի եւ նավթամթերքի ներկրման ծավալն անցյալ տարի 2012 թվականի համեմատ նվազել է 5,32 տոկոսով եւ կազմել 327 հազար 990 տոննա: Ներմուծված նավթամթերքի մաքսային ընդհանուր արժեքը գերազանցել է 341,8 միլիոն դոլարը: Հայաստանի կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի տվյալներով՝ նախորդ տարի մեր երկիր ներկրված ոչ հում նավթի ու նավթամթերքի ընդհանուր ծավալի մոտ 30-ական տոկոսը Ռումինիայից ու Ռուսաստանից է, մոտ 14 տոկոսը՝ Բուլղարիայից, 12,5 տոկոսը՝ Իսրայելից, շուրջ 9,6 տոկոսը՝ Իրաքից:

Անցյալ տարի 2012 թվականի համեմատ Հայաստանի նավթամթերքի շուկայում իրենց դիրքերն են զիջել Բուլղարիան (շուրջ 30 տոկոսով), Իրաքը (17 տոկոսով) եւ Իսրայելը (4,6 տոկոսով): Ռումինիայից նավթամթերքի ներկրումն անցյալ տարի ավելացել է 39, իսկ Ռուսաստանից՝ 2,3 տոկոսով:

2012 թվականին Հայաստան է ներկրվել 346 հազար 403 տոննա ոչ հում նավթ եւ նավթամթերք, որի մաքսային ընդհանուր արժեքը կազմել է 362 միլիոն 149 հազար դոլար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՓԵՏՐՎԱՐ

25.02.2014. Սրբոց Ղեւոնդյանց քահանաների հիշատակության օր

27.02.2014. Սուրբ Վարդանանց զորավարների եւ 1036 վկաների հիշատակության օր

451 թվականի մայիսին, Ավարայրի ճակատամարտում, հայրենիքի, հայ եկեղեցու եւ քրիստոնեական հավատի պահպանման համար նահատակված Վարդանանց զորավարներն ու 1036 մարտիրոսները Հայաստանյայց Առաքելական եկեղեցու մեծագույն սրբերից են: Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց ի վեր հայ եկեղեցին սերտորեն կապված է եղել հայրենիքի պաշտպանության գործին: Դրա վառ օրինակը Վարդանանց պատերազմն է: Պարսից զորքերի դեմ մղված պատերազմում հայ մարտիկների կողքին էր հայ եկեղեցին: Հովսեփ կաթողիկոսի եւ Ղեւոնդ Երեցի առաջնորդությամբ:

Վարդանանց տոնին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ հայկական բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

ՆՈՐՈՒՅԹ

ԼՐԱՅՈՒՅԻՉ ԲԱՂԱԴՐԻՉ՝ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՍՏԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Այսուհետեւ վարորդական վկայական ստանալ ցանկացողները գործնական քննություն են հանձնելու քաղաքային պայմաններում: Այդ մասին հայտնի դարձավ ՆԳ նախարարության 2014 թվականի ռազմավարության շնորհանդեսի ժամանակ, որը ներկայացրեց ՆԳ նախարարության բարեփոխումների եւ զարգացման գործակալության տնօրեն Իրակլի Բերաիան:

Նա խոսեց նաեւ 2014 թվականի համար ծրագրված նոր համարանիշների ներդրման մասին, որոնք, նրա խոսքերով, իրենց ձեւով ու բովանդակությամբ կհամապատասխանեն միջազգային չափորոշիչներին:

Վարորդական վկայականի քննությունների մակարդակի բարձրացման նպատակով ծրագրվում է սերտ համագործակցություն հաստատել երկրում գործող ավտոդպրոցների հետ: Ծրագրվում է նաեւ դպրոցներում ներդնել ճանապարհային նշանների եւ երթեւեկության կարգուկանոնի ուսուցումը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«ԱՅՍ ՆԿԱՐԻՉԸ ՄԵՐ ՍՎԵՏԼԱՆԱՅԻ ԵՎ ԻՌԵՆԻ ՊԱՊԻԿՆ Է»

Այս մարդուն, ում մասին գրում եմ, Թբիլիսիի թիվ 104 դպրոցում տեսնում են գրեթե ամեն օր: Նա գալիս է այս կրթօջախ, որպեսզի տուն տանի իր երկու թոռնուհիներին՝ 2-րդ դասարանցի Սվետլանային ու 6-րդ դասարանցի Իռենին, ովքեր սովորում են այստեղ: Նա վաստակաշատ ու ճանաչված թբիլիսցի գեղանկարիչ Գեւորգ Մանոյանն է: Մանոյանը մեր երկրի կերպարվեստի աշխարհին ծանոթ է իր ինքնատիպ վրձնով: Նրա կտավներն ու առանձնապես նատյուրմորտները ցուցադրվել ու դեռ ցուցադրվելու են զանազան պատկերասրահներում, զարդարում եւ դեռ զարդարելու են գեղարվեստի սիրահար հավաքորդների բնակարաններ: Իր ստեղծագործական հարուստ կենսագրության մեջ, սակայն, նա նման պահեր դեռ չէր ունեցել...

Փետրվարի 13-ին Գեւորգ Մանոյանի ստեղծագործությունների համար «պատկերասրահ» էր դարձել Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցի գողտրիկ բեմը, իսկ հանդիսատեսը դպրոցի աշակերտները, ծնողները եւ ուսուցիչներն էին:

Իր բովանդակությամբ փոքր-ինչ անսովոր այդ միջոցառումը, որ կազմակերպվել էր դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի նախաձեռնությամբ եւ կրթօջախի հայոց լեզու-գրականություն, երգ-երաժշտություն առարկաների ուսուցչուհիներ Գյուլնարա Հարությունովայի ու Մարինե Արշակյանի մեղվաջան աշխատանքի շնորհիվ, կդառնա նրա մասնակիցների՝ կրթօջախի աշակերտների կյանքի հիշարժան օրերից մեկը:

Երբ աշակերտները դահլիճում տեսան Գ.Մանոյանին, շատերը զարմացած բացականչեցին. «Ախր այս նկարիչը մեր Սվետայի ու Իռենի պապիկն է, ինչպե՞ս չգիտեինք»: Կենդանի արվեստագետի հետ շփվելու, նրան հաղորդակից լինելու հնարավորությունը, հանդիսավորության հետ մեկտեղ, նաեւ մի անբացատրելի ուրախությամբ էր բովանդակել դպրոցի շնորհալիների՝ երգ ու ասմունքի պատանի վարպետների ներկայացրած գրական-երաժշտական կոմպոզիցիան, որը գեղեցիկ անդրադարձ էր գեղանկարչի կյանքի կարեւոր եւ ուսանելի փաստերին ու իրադարձություններին: Իսկ նրան ուղղված հարց ու պատասխանը դարձավ անմոռանալի մի զրույց՝ կյանքի մասին, ինչից պատանիներն անշուշտ քաղեցին շատ օգտակար դասեր:

«Սիրեք ձեզ շրջապատող բնությունը, մարդկանց ու ձեր ազնիվ գործերով ու ապրելու կերպով գեղեցկացրեք կյանքը, դարձրեք այն ավելի լավ ու բարի»,- սա էր Գեւորգ Մանոյան արվեստագետի՝ իր պատանի լսարանին ուղղված ցանկությունն ու՝ կտակը:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍՈՉԻ - 2014

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ՝ ԵԶՐԱԳԾԻ ՇԵՄԻՆ

Եզրագծին են մոտենում Սոչիի ձմեռային XXII Օլիմպիական խաղերը: Մրցաշարին խաղարկվելիք մեդալների 98 կոմպլեկտից 83-ի տերերը արդեն հայտնի են:

Փետրվարի 20-ի դրությամբ, թիմային հաշվարկում մրցաշարային աղյուսակը 10 ոսկե, 4 արծաթե եւ 7 բրոնզե մեդալով գլխավորում է Նորվեգիայի հավաքականը: Երկրորդ տեղում 8 ոսկե, 10 արծաթե եւ 4 բրոնզե մեդալներով Կանադայի թիմն է: Լավագույն եռյակը եզրափակում է ԱՄՆ հավաքականը (8 ոսկե, 6 արծաթե, 11 բրոնզե մեդալ): Լավագույն տասնյակում են Գերմանիայի (8,4,4), Ռուսաստանի (7,9,7), Նիդերլանդների (6,7,9), Շվեյցարիայի (6,3,2), Բելոռուսի (5,0,1), Ֆրանսիայի (4,4,7) եւ Լեհաստանի (4 ոսկե մեդալ) հավաքականները:

Մեդալների ընդհանուր հաշվարկում առաջինն են ամերիկացիները՝ 25:

Ցավոք, վրաց եւ հայ օլիմպիականները չեն կարող պարծենալ առանձնակի նվաճումներով: Վրաց դահուկորդուհի Նինո Ծիկլաուրին 83 մասնակիցների թվում զբաղեցրեց 49-րդ տեղը, իսկ լեռնադահուկային սպորտի հսկա ոլորավայրէջքում Հայաստանի ներկայացուցիչ Արման Սերերբրակյանը 71 մարզիկների թվում զբաղեցրեց 46-րդ տեղը, Սերգեյ Միքայելյանը եւ Արթուր Եղոյանը սքիաթլոն 30կմ դահուկավազքում, համապատասխանաբար, 46-րդ եւ 63-րդ հորիզոնականներում էին, Կատյա Գալստյանը կանանց դասական դահուկավազքի 10կմ ոճում զբաղեցրեց 64-րդ հորիզոնականը:

Սոչիի ձմեռային օլիմպիադան կավարտվի փետրվարի 23-ին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Օլիմպիական խաղերի քառակի չեմպիոն, փոխչեմպիոն, 11-ակի աշխարհի չեմպիոն Ալեքսանդր ...: 9.Բնագավառ: 10.Կինոնկար: 11.Լանջաբաց: 13.Վրաց բանաստեղծ ... Չիքովանի: 16.Քաղաք Ֆրանսիայի հյուսիս-արեւելքում: 17.Մշակելի հող, որտեղ ցանում են ընդեղեններ: 19.Շոկոլադ «...-Վեյ»: 22.Օգնություն, օժանդակություն: 24.Հայազգի ջազային երգչուհի, ով համարվում էր Խորհրդային Միության լավագույն ջազ կատարողներից մեկը ... Հովհաննիսյան: 25.Կղզի Ինդոնեզիայում: 27.Պարկարագիլ: 29.Ֆրանսիացի նշանավոր դերասանուհի, ժամանակին ճանաչված որպես «աշխարհի երբեւիցե ապրած ամենահռչակավոր դերասանուհի» անվանմամբ՝ Սառա ...: 32.Նշված սահմանված քանակից շատ: 33.Արեւելյան ծագում ունեցող հնագույն հարվածային երաժշտական գործիք: 35.Շատ աղքատ, ցնցոտիավոր: 38.Կաշվից, մորթուց հագուստեղեն կարող արհեստավոր: 40.Երկիր արեւմտյան Աֆրիկայում ...-Լեոնե: 41.Ջիթապտղի նմանվող ալյուրոտ քաղցր պտուղ: 44.Ա.Դյումայի «Հրացանակիրներից»: 47.Հովանոցավորների ընտանիքին պատկանող բույս: 48.Թիթեռնածաղիկների ընտանիքին պատկանող հատիկավոր բույս: 50.... ընդ ատաման: 51.... Երկիր, Անտարկտիդա եւ Հարավային Ատլանտիկայի կղզիներ: 52.Մարմնի վերին մասը՝ վզից մինչեւ բազուկը: 53.Կինոյի եւ թատրոնի հնդիկ դերասան ... Կապուր: 54.Եմ օժանդակ բայի ժխտական ձեւը: 55.Մետաղալարից հյուսված ցանցավոր զրահաշապիկ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Տեղյակ եմ: 2.Գնդասեղ: 3.Կանացի կարճ բաճկոնակ: 4.Քաղաք Սիրիայում: 5.Սովորաբար մթնոլորտային տեղումներով զուգորդվող ուժեղ քամի: Մրրիկ: 6.Ժամանակ (արեւմտ.): 8.Իտալացի ֆուտբոլիստ Քրիստիան ...: 12.Անպետք իրերի թափթփուկ, անմաքրություն: 14.Հայ գուսան: 15.Թանկարժեք մետաղ: 18.Ծովախեցգետին: 19.Թելի վերածել, հյուսել, ոլորել: 20.Օդիշի (Սամեգրելո) իշխան ... II Դադիանի: 21.Իսպանացի ֆուտբոլիստ, դարպասապահ ... Կասիլյաս Ֆերնանդես: 23.Գետ Ռուսաստանի Կրասնոյարսկի երկրամասում: 26.Ֆրանսիայի ամենաերկար գետը: 28.Որսի միս: 29.Բաբելոնյան գերագույն աստված, Բաբելոն քաղաքի հովանին: 30.Իտալական ծագումով ամերիկացի վիրտուոզ ջութակահար Ռուջերո ...: 31.Ճաշատեսակ: 34.Ճապոնական ավտոմեքենա: 36.Վրացական մարզական թերթ: 37.Խոշոր եղջերավոր կենդանիների վարակիչ հիվանդություն, դաբաղ: 39.Սիրելի անձ: 42.Ներշնչվող ու արտաշնչվող օդը: 43.Ցեղ, սերունդ: 45.Նվագարան: 46.Վրան լավաշ թխելու թիթեղ: 48.Քաղցի զգացում: 49.«Ինքն» դերանվան հնաձեւ սեռական հոլովը:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Հարակից: 9.Ադիս: 10.Սարդ: 11.Թագավոր: 12.Բլթակ: 14.Վահան: 16.Հոգեւորական: 18.Ջրալի: 20.Մառան: 21.Սրբիչ: 25.Գուսան: 26.Կարգազանց: 27.Ագավա: 28.Կարին: 30.Փախստական: 32.Անկախ: 33.Կապիկ: 35.Կուրծք: 39.Կարեն: 40.Խուզարկություն: 42.Բարակ: 43.Սեւակ: 44.Տարեկան: 45.Սիփան: 46.Մոկաց: 47.Կարեկից:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Կարապետ: 2.Փառավոր: 3.Փիլոյան: 4.Աքիլլես: 5.Վստահ: 7.Ոսկան: 8.Կրթարան: 13.Կոշիկ: 14.Վադուց: 15.Արա: 17.Գառ: 19.Իրավունք: 20.Մառանիկ: 22.Չանախ: 23.Զգեստ: 24.Ազդակ: 25.Գնդակ: 27.Արթուն: 29.Նարեկ: 30.Փափուկ: 31.Նամուս: 32.Ածխածին: 34.Կաչաղակ: 36.Վատաբան: 37.Ակնեղեն: 38.Թթվածին: 40.Խաղաղ: 41.Նեսոն:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774 www.vrastan.ge E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН" Тбилиси, Грузия <VRASTAN> Georgia, Tbilisi Индекс 66445